սկզբում Խաչատուր Կեչառեցին համակիր չէ եղել ժողովին, համարելով այն մի տեսակ ըմբոստութիւն կամ հակառակութիւն կաթուղիկոսի դէմ, և յետոյ միայն համոզուել է և աւելացրել իւր ստորագրութիւնը։ Այս ենթադրութեան հիմք է ծառայում մեզ վերոյիշեալ երեւոյթից զատ նաև նորա մի արտայայտութիւնը իւր Ողբի մէջ՝ «զհովիւ հօտին մեր բամբասեցաք». որ միայն Գրիգոր Անաւարզեցուն կարող է վերաբերուել և գրուած է, ինչպէս կը տեսնենք, ժողովից քիչ առաջ։ Ի հարկէ կային ուրիշ պատճառներ ևս, որոնք պէտք է բարոյապէս ճնշէին նորան և հակէին դէպի համաձայնութիւն. ժողովին մասնակցում էին բացի Օրբէլեան և Խաղբակեան իշխաններից՝ Սիւնեաց, Բճնոյ, Հաղբատի, Հաւուց թառի, Գողթան եպիսկոպոսները, «Տէր Մարգարէ եղբօրորդի Վանական վարդապետին», իսկ վարդապետներից Գլաձորի դպրոցի նշանաւոր վարժապետներ՝ Եսայի Նչեցի եւ Դաւիթ վարդապետ։ Բճնոյ Յովհաննէս եպիսկոպոսի հետ ձեռնարկին ստորագրում է և Գրիգոր Բճնեցի վարդապետը, որ ինչպէս տեսանք իւր վիճակի եպիսկոպոսի մօրեղբայրն էր և «հրամանատար» նոյն աթոռի, և ինքն էր միայն Արարատեան կամ Բջնոյ վիճակի վարդապետ լինելով հանդերձ, որ իւրայիններին հետ չէ. բայց կաթուղիկոսի ակնյայտնի և գայթակղեցուցիչ դիրքը դէպի Հայ Եկեղեցու աւանդութիւնների վերջնականապէս համոզում են և նորան միանալ իւր ընկերների հետ։ Ժողովից մի քանի տարի յետոյ նա Ստեփանոս Օրբէլեանի հիւրն է և մտերիմը. նորա խնդիրքով էլ Օրբէլեանը գրել է իւր Ողբ ի կաթուղիկէն, ինչպէս ցոյց է տալիս վերնագիրը. «Ի Ստեփանոսէ Սիւնեաց այցելուէ, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցոյ ի թուին ՉԽՄ» (*)։ Կեչառեցու դիրքն ու բարեկամութիւնը աւելի պարզ երևում են Ողբի վերջին տողերի մէջ.

Փութով մեծաւ զմեզ հարկեալ,
Ի յայս հանդէս բանից մղեալ,
Բարեւնապետս հոգւով լցեալ,
Անյաղթ հռետոս շնորհօք ծաղկեալ
Եւ բանիբուն մեզ ճանաչեալ.
Յաղագս բազմաց գովաբանեալ
Որ Խաչատուրս է յորջորջեալ,
ՅԱրարատեան տանէն եկեալ։

Վերջին տողը պարզում է նորա Կեչառեցի կոչումը. Կեչառիսը Բջնոյ կամ Արարատեան թեմի երկրորդ կեդրոնն էր ԺԳ. դարում։ Ստեփանոս Օրբէլեանը ոչ միայն իւր Ողբն է գրել Խաչատուր Կեչառեցու խնդիրքով, այլ և Հակաճառութեան տասնեամէկերորդ ձեռնարկը կամ գլուխը(**)։

(*) Ձեռ. Էջմ. № 2407, 265։ Հրատարակել է Կ. Կոստանեան. Ողբ ի կաթուղիկէն, Թիֆլիս 1885։

(**) Ձեռ. երևս. № 633. «բոլոր պատճառ ժողովոյն Քաղ-

Նորա վարժապետական գործունէութեան մասին ևս ունինք տեղեկութիւն ՉԿԴ (=1315) թուին գրուած մի նկարագրդ աւետարանի յիշատակարանից, թէև առանց մանրամասնութիւնների. «յամս առաքելաշնորհ արհեպի. տն. Յովհաննիսի մականուամբ Աւրպել կոչեցելոյ, ձեռամբ նուաստ և ոսկեգիր գրչապետի Բարդաղի, աշակերտի մեծ բարեւնապետի Խաչատուր Կեչառուեցի, գծագրեցաւ ի քաղաքիս յԵղեգիս ի տէրութեան. արեաց վեհագունի իշխանաց իշխեցողի մեծ կոմսի և կողմնակալի Բուրթելին և նորին հարազատի Բուղտային, ի խնդրոյ սրբասնունդ քհի. Սահակայ»։ Այստեղ յիշուած Բուրթելն ու Բուղտան Ստեփանոս Օրբէլեանի եղբօր Ելիկումի որդիքն են. առաջինը յայտնի իւր երկարատև իշխանութեամբ եւ նշանաւոր հանդիսացած իւր կրկնայարկ եկեղեցւով Ամաղոնի վանքում։ Աւետարանը թուղթ է, 24×32 սմ. մեծութեամբ, 324 թ., խոշոր բոլորգրով եւ նկարազարդուած չորս աւետարանիչների մանրանկարներով և սղկրնազարդերով, նաև տասը խորանով սկզբում, և բազմաթիւ ծաղկագիր–մանրանկարչական սկզբնատառերով։ Ունի և երկու «վարդազարդ՝ վրան ծաղկահիւս մի խաչ, իսկ սորա կողքին մի մի թռչուն, ամբողջը պատած գեղեցիկ շրջանակով»։ Երկրորդ վարդազարդի շուրջը երկաթագրով գրուած է. «բոլոբակիս շրջապատի դուք յիշեցէք զիս բարեւնի զԽաչատուր Կեչառուեցի. թվ. ՉԿԴ»։ Այս քաղուածքներից հաստատուում է ոչ միայն Կեչառեցու վարժապետական գործունէութիւնը, ի հարկէ ոչ այնչափ ընդարձակ, ինչպէս Գլաձորի դպրոցի վարժապետ–վարդապետներն էին, այլ և նորա նկարիչ և գրիչ լինելու իրողութիւնը. Կեչառեցու մի ուրիշ աշակերտի մասին կը տեսնենք քիչ յետոյ։ Տարաբաղդաբար ձեռքի տակ չունինք լուսանկարներ, բայց Ե. Լալայեանցի վկայութեամբ պէտք է գեղարուեստական արժէք ունենան այդ ձեռագրի մանրանկարները. ձեռագիրը գտնուում էր Նուխուայ գաւառի Վարդաշէն գիւղի եկեղեցում(*)։

Մեր ձեռքն է հասել նաև Կեչառեցու սեպհականութիւն եղած մի շատ կարևոր ձեռագիր. «պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարցն սրբոց և ի վդաց., և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ բարեւնապետին Գրի., որդոյ Աբասայ»(**). որ փիլիսոփայ-

կեղոնի։ Եւ բացայայտութի. նոցին աղանդոյն. և յայտարարութիւն տումարին Լեւոնի վիպասանեալ Նորին Ստեփանոսի ի խնդրո Խաչատուր վրդպէ. Կեչառեցոյ. սկս. ի Թագաւորութեն. Թէոդոսի փոքու. . . .»։

(*) Օգտուում ենք Լալայեանցի Նկարագրութիւնից Հ. Ակինեանի արտագրութեամբ, այժմ ձեռքի տակ չունենալով Պատուական Քուշմանեանի մեզ համար կատարած նկարագրութիւնն ու յիշատակարանների արտագրութիւնը։

(**) Ձեռ. Էջմ. № 1650/1879 (Կար. 1608)։ Տես Արարատ. 1905. 148. Կ. Վ.-ի յօդուածը։ Ձ-ի բովանդակութեան մասին Տաշեան, Մայր ցուց. 213։ Պատճառաց գրքի հեղինակ Գրիգոր Աբասայ որդու մասին Ակինեան. Հ. Ա. 1907. 132։